

ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՅՈԼՆՈՒՄ

Ծուրջ մեկ ու կես տարի առաջ, 1992 թվականի հունվարի 31-ին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի № 1852 սրբատառ կոնդակով Գերմանիայում ստեղծվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ինքնուրույն թեմ: Ի լրումն այս որոշման, սույն թվականի հունվարի 24-ին Քյոլնի (Գերմանիա) առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ Գերմանիայի հայոց թեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Բեքճյանի աթոռակալության հանդիսությունները:

Աթոռակալության հանդիսությանը նախագահեց Թուրքիայի հայոց Ամենապատիվ Տ. Գարեգին Սրբազան Պատրիարք Հայրը՝ առընթերակա ունենալով Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանին, Ամերիկայի Միացյալ Նահանգների արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին, գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին (Կ. Պոլիս), Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանին, հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Հովհաննիսյանին և արժանապատիվ Տ. Հակոբ ավագ քահանա Գյոկչյանին:,

Սույն հանդիսությանը մասնակցեցին նաև Ասորի Ուղղափառ Եկեղեցու Եվրոպայի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուլիուս արքեպիսկոպոս Չիչեքը, Կաթողիկե Եկեղեցու կարդինալ Մայանների փոխանորդ Քլաուս եպիսկոպոս Տիքը, Ավետարանական Եկեղեցու պետ Մանֆրեդ Քոքը, Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու պետ դոկտ. Մերավի վարդապետ Թեպեկեն, Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից՝ Նիկոլաուս վարդապետ Թոնը, Հույն Ուղղափառ Եկեղեցու կողմից՝ Մյուռոն վարդապետը, Միջեկեղեցական խորհրդի կողմից՝ Տեքան Ռայներ վարդապետ Ֆիշերը և պատվելի դոկտ. Հանս-Կեորկ Լինքը, Ճապոնական Ավետարանական Եկեղեցու կողմից՝ Սաթոշի վարդապետ Սասաքին, Հոլանդական Ավետարանական Եկեղեցու կողմից՝

Անդրե Փիեթեր Ֆլիկերը, Հռոմեական Կաթողիկե Եկեղեցու կողմից՝ դոկտ. Հութթա Գոնտան, Ազատ Ավետարանական Եկեղեցու կողմից՝ պատվելի Հերբերտ Հաքշթայթը, Նահանգային Ավետարանական Եկեղեցու կողմից՝ պատվելի Հանս Փեթերս Ֆրիդրիխը, և տակավին առաջնորդարանի թաղի շրջանից՝ Ավետարանական և Կաթողիկե Եկեղեցիների հոգևոր հովիվներ:

Բացի եկեղեցականներից, հանդիսությանը ներկա էին նաև համայնքային զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես՝ Բեռլին, Համբուրգ, Բրաունշվայգ, Բրեմեն, Տիզբուրգ, Նույվիտ, Քյոլն, Ֆրանկֆուրտ, Շտուտգարդ, Էսլինգեն, Հանաու, Մյունխեն, Նյուրնբերգ, Մայնց և Քեհլ քաղաքներից:

Օրվա ս. պատարագը մատուցեց նորընտիր առաջնորդ Սրբազան Հայրը: Աթոռակալության առթիվ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանն ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ այս առթիվ գրված կոնդակը:

Հավարտ ս. պատարագի բովանդակալից քարոզ խոսեց Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Սրբազան Հայրը և նորընտիր առաջնորդ Սրբազան Հորը նվիրեց եպիսկոպոսական թանկագին մի պանակ: Այս անգուգական նվերի համար, ի լուր նաև օտար հյուրերի, գերմաներեն լեզվով շնորհակալական խոսք ասաց առաջնորդ Սրբազան Հայրը:

Ս. պատարագից հետո Հյուրթ քաղաքի քաղաքապետարանի սրահում, առաջնորդական գահակալության առթիվ, տրվեց սիրո սեղան, որին ներկա էին շուրջ 550 հրավիրյալներ: Սիրո ճաշի ընթացքում իրագործվեց գեղարվեստական կոկիկ մի ծրագիր, որին իրենց մասնակցությունը բերեցին պրոֆ., դոկտ. Լուիզա Պոզապալյանը, դոկտ. Միհրան Տապաղը, Արա Մալիքյանը, Սայաթ Ջամանը և Արթո Պեքճյանը:

Այնուհետև նորընտիր առաջնորդ Սրբազան Հորն ուղղված իրենց շնորհավորական խոսքն ասացին ներկա Սրբազան Հայրերը:

Բարի և ազգանվեր գործունեության երթ մաղթենք նորընտիր առաջնորդ Սրբազան Հորը: